

2007-2009թթ

ՆԵՐՂՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2007

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
<b>Բաժին 1. Գազափոխադրման համակարգ</b>	5
1.1. Ներդրումային ծրագրում նախատեսվող միջոցառումներ	5
1.2. Նախատեսվող ներդրումներ	5
1.2.1. Մայրուղային գազատարների շինարարություն, վերատեղադրում և վթարային հատվածների փոխարինում	6
1.2.2. Գազաբաշխիչ կայանների շինարարություն և վերազինում	7
1.2.3. Գծային փականների տեղադրում և ամբողջական վերազինում	8
1.2.4. Էլեկտրապաշտպանիչ կայանների տեղադրում և ամբողջական վերազինում	9
1.2.5. Էներգամատակարարման համակարգի վերականգնում	10
1.2.6. Գազափոխադրման համակարգի հաշվառման բարելավում	11
1.2.7. Գազափոխադրման համակարգում ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրում	12
1.2.8. Գազափոխադրման համակարգի ընդլայնում	13
1.2.9. Աբովյանի ԳՍՊԿ-ի վերակառուցման և արդիականացման աշխատանքներ	15
<b>Բաժին 2. Գազաբաշխման համակարգ</b>	20
2.1. Ներդրումային ծրագրում նախատեսվող միջոցառումներ	20
2.2. Նախատեսվող ներդրումներ	20
2.2.1 Գազաբաշխման ցանցի շինարարություն	21
2.2.2. Նոր բաժանորդների գազահաշվիչների ձեռք բերում և տեղադրում	21
2.2.3. Գազաբաշխման համակարգի վերականգնում, փոխարինում, վերակառուցում	22
2.2.4. Գազաբաշխման համակարգի հաշվառման արդիականացում	24
2.2.5. Գազաբաշխման համակարգի ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրում	25
2.2.6. Գազաբաշխման համակարգի էլեկտրաքիմիական պաշտպանություն	26
2.2.7. Էներգամատակարարման համակարգի արդիականացում	27
<b>Բաժին 3. Գազափոխադրման և գազաբաշխման համակարգերի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտներում նախատեսված ներդրումային ծրագրեր</b>	30
3.1. Շենքեր շինությունների կառուցման, ձեռք բերման և ընդլայնման միջոցառումներ	30
3.2. Ավտոտրանսպորտային միջոցների ձեռք բերման միջոցառումներ	31
3.3. Աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի, վթարային ծառայության, արտակարգ իրավիճակների, հրդեհային անվտանգության, աշխատողների ուսուցման և որակավորման բարձրացման միջոցառումներ	33
3.4. Կապի համակարգում բարելավման միջոցառումներ	33

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն «Ներդրումային ծրագիրը» կազմված է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի, 1 կետի, բ), ը) ենթակետերի և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ թիվ 0109 լիցենզիայի 5.13 կետի և թիվ 0111 լիցենզիայի 5.12 կետի պայմանների համաձայն:

Ներդրումային ծրագրի նպատակն է 2007-2009թթ. ընթացքում «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից՝

- գազափոխադրման համակարգում
- գազաբաշխման համակարգում
- գազափոխադրման և գազաբաշխման համակարգերի շահագործման և սպասարկման ոլորտներում

ներդրումների ներգրավման ճանապարհով սպառողների անխափան, հուսալի և անվտանգ գազամատակարարման ապահովումը:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ ներդրումային ծրագրը կազմված է «Տրանսգազ» ՍՊԸ-ից ու Գազամատակարարման և Գազիֆիկացման Մասնաձուղերից (ԳԳՄ) ստացված գազամատակարարման համակարգի աշխատունակության պահպանման, համակարգի հուսալիության բարձրացման և անվտանգ շահագործման լոկալ ծրագրերի հիման վրա, որոնցում ներառված են ներդրումներ պահանջող օբյեկտների և աշխատանքների անվանացանկը՝ իրենց ծավալագումարային գնահատմամբ, ըստ տարիների և սպասվող արդյունքների:

**Բ Ա Ժ Ի Ն 1**

**Գազափոխադրման համակարգ**

## Բաժին 1. Գազափոխադրման համակարգ

### 1.1. Ներդրումային ծրագրում նախատեսվող միջոցառումներ

1. Մայրուղային գազատարերի շինարարություն, վթարային հատվածների փոխարինում և վերատեղադրում:
2. Գազաբաշխիչ կայանների շինարարություն և վերազինում:
3. Գծային փականների տեղադրում և ամբողջական վերազինում:
4. Էլեկտրապաշտպանիչ կայանների տեղադրում և ամբողջական վերազինում:
5. Էլեկտրասնուցման համակարգի վերականգնում:
6. Գազափոխադրման հաշվառման համակարգի արդիականացում
7. Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրում:
8. ԳՍՊԿ-ի վերակառուցման և արդիականացման աշխատանքների:

### 1.2. Նախատեսվող ներդրումներ

Սույն ենթաբաժնում ներկայացվում են գազափոխադրման համակարգում 2007-2009թթ. ընթացքում նախատեսվող ներդրումները:

Միջոցառումները մշակելիս հիմք են ընդունվել տեղերում կատարված հետազոտման, և ախտորոշման արդյունքներով կազմված թերությունների ակտերը ու կիրառվել են տեղայնացված մոտեցումներ, ինչպես նաև ԳՍՊԿ-ի համալիր վերակառուցման բիզնես-ծրագիրը: Անհրաժեշտ միջոցառումների ծավալագումարային ամփոփ տեսքը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Գազափոխադրման համակարգում նախատեսվող ներդրումներ

h/h	Հիմնական ուղղվածություն	Միջոցառումների անվանումը	տարի (մլն.դրամ)		
			2007	2008	2009
1	Մայրուղային գազատարներ	Գազատարերի շինարարություն, վերատեղադրում, փոխարինում	555,7	157,9	56,7
2		ԳԲԿ, ԳԶԿ շինարարություն և վերագինում	96,6	70,8	70,8
3		Գծային փականներ տեղադրում, վերագինում	25,0	25,0	25,0
4		ԷՊԿ տեղադրում, վերագինում	159,0	159,0	38,0
5		Էլ.համակարգի վերականգնում	39,0	13,0	13,0
6		Հաշվառման համակարգի արդիականացում	25,4	26,7	24,2
7		Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրում	138,5	12,5	12,5
8		Համակարգի ընդլայնում	32981,8	17323,2	1695,1
<i>Ընդհանուր</i>			<b>34020,9</b>	<b>17788,0</b>	<b>1935,2</b>
9	<b>ԳՍՊԿ</b>	Վերակառուցում և արդիականացում	1427,0	727,0	2857,3
<b>Ընդամենը</b>			<b>35447,9</b>	<b>18515,0</b>	<b>4792,5</b>

1.2.1. Մայրուղային գազատարերի շինարարություն, վերատեղադրում և վթարային հատվածների փոխարինում

2007-2009 թթ. նախատեսվում է մայրուղային գազատարների ցանցի շինարարություն և ընդլայնում, որի ժամանակացույցը ըստ ծավալագումարային ցուցանիշների բերված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Մայրուղային գազատարների շինարարություն և ընդլայնում

h/h	Աշխատանքներ	մմ	Անհրաժեշտ ներդրումներ (մլն. դրամ)					
			2007		2008		2009	
			կմ	գումար	կմ	գումար	կմ	գում
1	Իլիջևակ-Երևան	Ø 720	0.5	40.7	-	-	-	-
2	Միջակցում, Իլիջևակ-Երևան-Արարատ	Ø 530	1.1	66.5	-	-	-	-
3	Երևան-Արմավիր, 10-21 կմ-ում	Ø 530	3.0	346.1	-	-	-	-
4	Վարդենիս-Զեյրնուկ 47-48 կմ-ում	Ø 300	1.0	64.3	-	-	-	-
5	Կ/Կամուրջ-Ալավերդի	Ø 720	0.1	8.1	-	-	-	-
6	Հրազդան ԳԲԿ-1 կողմնատար	Ø 720	-	-	1.4	113.7	-	-
7	Գազատարների բացված հատվածներում մեկուսիչ շերտի վերականգնում և հողածածկում	կմ	1.5	5	2	6.7	2	6.7
8	Գազատարներ և փականային հարթակներ տանող ճանապարհների վերականգնում	կմ	10	25	15	37.5	20	50

<b>Ընդամենը</b>	<b>555.7</b>	<b>157.9</b>	<b>56.7</b>
-----------------	--------------	--------------	-------------

Ընկերության կողմից գազափոխադրման համակարգում 2007թ. նախատեսված միջոցառումները, որտեղ ներառված են մայրուղային գազատարերի վթարային հատվածների փոխարինման և վերատեղադրման միջոցառումներ համառոտ նկարագրությունը՝

1. Իլիչևսկ-Երևան Ø 720 մմ 2007 թ. - գազատարի անհրաժեշտ տեխնոլոգիական ցուցանիշների վերականգնման նպատակով, համաձայն կատարված նախագծի, նախատեսվում է իրականացնել գազատարի 0.5 կմ հատվածի վերատեղադրում:
2. Միջակցում Ø 530մմ; Իլիչևսկ-Երևան Ø 720մմ և Երևան-Արարատ Ø 377մմ - Արարատի ցեմենտի գործարանի անխափան գազամատակարարում, ինչպես նաև հակադարձ գազի հոսք Արարատ-Երևան ուղղությամբ:
3. Կ/Կամուրջ-Ալավերդի Ø 720 մմ 2007 թ. - գազատարի անհրաժեշտ տեխնոլոգիական ցուցանիշների վերականգնման նպատակով, համաձայն կատարված նախագծի, նախատեսվում է իրականացնել գազատարի 0.1 կմ հատվածի վերատեղադրում:
4. Վարդենիս – Ջերկուկ 200 մմ տրամագծով մայրուղային գազատարի թողունակությունը մեծացնելու և ռեժիմները կարգավորելու նպատակով աշխատանքներ են կատարվելու 200 մմ գազատարը փոխարինվելու 300 մմ տրամագծի գազատարով, որով նաև կապահովվի Վարդենիս – Ջերկուկ գազատարի ամբողջականությունը:
5. Երևան-Արմավիր 10-21 կմ-ում 3 կմ գազատար, որը գտնվում է ճահիճային հատվածում, փոխարինվելու է նոր ժամանակակից մեկուսիչ շերտով պատած խոխովակներով:
6. 2008 թ. նախատեսվում է Հրազդան ԳԲԿ-1 320 մմ կողմնատարը փոխարինել 720 մմ գազատարով, որը կապահովվի կայանի ձմեռային «պիկիկային» պահանջարկը:

*1.2.2. Գազաբաշխիչ կայանների շինարարություն և արդիականացում*

Գազաբաշխիչ կայանները նախատեսված են բնական գազի մայրուղային գազատարերի գազաբաշխման համակարգի ճնշմանը համապատասխանեցնելու նպատակով, կախված բնակավայրերի, արդյունաբերական կամ էներգետիկ օբյեկտների գազաֆիկացման նախագծերով նախատեսված ճնշումներից՝ 12.0, 6.0 կամ 3.0 մթն.:

2007-2009թթ. նախատեսվում են հետևյալ ներդրումները՝

h/h	Աշխատանքների անվանում	Անհրաժեշտ ներդրումներ (մլն. դրամ)		
		2007	2008	2009
1	Գազաբաշխիչ կայանների շինարարություն և արդիականացում	96.6	70.8	70.8

2007-2009թթ. ԳԲԿ շինարարության և նոր տեխնոլոգիական սարքավորումների տեղադրման, ինչպես նաև օպերատորների շենքերի շինարարության և վերականգնման համար անհրաժեշտ աշխատանքների ծավալագումարային ցուցանիշները բերված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Գազաբաշխիչ կայանների շինարարություն և արդիականացում

h/h	Աշխատանքների անվանում	Չափման միավոր	Քանակ	Անհրաժեշտ ներդրումներ (մլն. դրամ)	
				միավոր	գումար
1	Մոտեցնող ճանապարհների վերականգնում	կմ	8	2.5	20
2	Նոր տեխնոլոգիական սարքավորումներ	հատ	5	2.5	12.5
3	Շենքերի վերականգնում	հատ	5	4.6	23
4	Օպերատորների շենքերի վերականգնում	հատ	7	2.9	20.3
5	ՍԱՄ մասնաճյուղի տարածքում թթվածնի արտադրամասի կառուցում, բարեկարգում և ցանկապատում	հատ	1	-	20.8
<b>Ընդամենը</b>					<b>96.6</b>

**Անկախ վոր արդյունքները**

1. Մոտեցնող ճանապարհների վերականգնում՝ հասանելիության ապահովում:
2. Նոր տեխնոլոգիական սարքավորումների տեղադրում՝ ԳԲԿ-ների տեխնոլոգիական ցուցանիշները ապահովելու համար: Աշխատանքները կատարվելու են Հրազդան-1, Երևան-1, Մասիս, Չարենցավան և Ջրվեժ ԳԲԿ-ներում:
3. ԳԲԿ-ների շենքերի վերականգնում՝ տեխնոլոգիական սարքավորումների պահպանման ապահովում: Շենքերի վերականգնման աշխատանքները կատարվելու են Դիլիջան, Վեդի, Սևան, Երևան-2 և Չարենցավան ԳԲԿ-ներում:
4. Օպերատորների շենքերի վերականգնում՝ պատշաճ աշխատանքային պայմանները ապահովելու նպատակով (Վայք, Ջերմուկ, Եղեգնաձոր, Արմավիր, Արզնի, Մասիս, Ակունք):
5. Թթվածնի արտադրամասի կառուցման անհրաժեշտությունը պայմանավորված է՝ Ընկերության կողմից իրականացվող շինհավակացման, ինչպես նաև շահագործման հետ կապված կարիքները հոգալու համար:

**1.2.3 Գծային փականների տեղադրում և ամբողջական վերազինում**

Մայրուղային գազատարների վրա տեղադրված են 200-ից ավել փականային հանգույցներ, որոնք ապահովում են գազատարերի այս կամ այն հատվածների անջատումները և գազամուղների կապը միմյանց հետ: Փականների մեծ մասը խցանային են:

Գազատարերի վրա նախատեսվող փականների քանակը, շինհավաքակցման աշխատանքների արժեքները ըստ տարիների բերված են աղյուսակ 5-ում:

**Աղյուսակ 5. Գծային փականների տեղադրում և ամբողջական վերազինում**

h/h	Աշխատանքների անվանում	Անհրաժեշտ ներդրումներ (մլն. դրամ)					
		2007		2008		2009	
		հ.	գումար	հ.	գումար	հ.	գումար
1	Գծային փականների ամբողջական վերազինում, տեղադրում	2	25	2	25	2	25

**Անկալվող արդյունքները**

Փականների տեղադրումը պարտադրվում է գործող շինարարական նորմերով և թույլ է տալիս շինարարական աշխատանքների, վթարների կամ նորոգման ժամանակ գազատարի հատվածները մեկուսացնել (անջատել): Աշխատանքների հիմք են հանդիսանում թերությունների ակտերը:

Ղազախ - Երևան գազատարի (d=1000մմ) կմ 43 և Ղազախ - Երևան - ԳՄՊԿ (d=530մմ) կմ 142 տեղադրված փականները ենթակա են փոխարինման:

**1.2.4 Էլեկտրապաշտպանիչ կայանների տեղադրում և ամբողջական վերազինում**

Էլեկտրաքիմիական պաշտպանությունը նախատեսված է ստորգետնյա գազամուղների կոռոզիոն քայքայումներից պաշտպանման համար: Էլեկտրաքիմիական պաշտպանությունը ապահովվում է կատոդային և դրենաժային պաշտպանության կայանների միջոցով:

Մայրուղային գազատարների շահագործումը առանց ԷՊԿ-ների, հատկապես ազրեսիվ, թափառող հոսանքներով և ջրահագեցած գրունտներում ու գետանցումներում, կբերի գազատարերի մետաղի քայքայմանը:

ԷՊԿ-երի տեղադրման և վերականգնման ծավալագումարային ցուցանիշները բերված են աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. ԷՊԿ-ների տեղադրում և ամբողջական վերազինում

ԻՎԻ	Մասնաճյուղի անվանումը	Անհրաժեշտ ներդրումներ (մլն. դրամ)					
		2007		2008		2009	
		հ.	գումար	հ.	գումար	հ.	գումար
1	ԷՊԿ-ների տեղադրում*	50	159	50	159	6	38
<b>Ընդամենը</b>			<b>159</b>		<b>159</b>		<b>38</b>

\*) ներառյալ ՆՀԱ:

Առ 31.12.06 թ.-ի դրությամբ գազափոխադրման համակարգում շահագործվում է թվով 82 կայան:

2007-2009 թթ. նախատեսվում է տեղադրել 106 հատ էլեկտրապաշտպանիչ կայան - «Ղազախ-Երևան II գիծ», «Ղազախ-Բերդ-Սևան», «Կարմիր կամուրջ-Ալավերդի-Վանաձոր-Դիլիջան» մայրուղային գազատարների վրա, որով և կավարտվի շահագործման մեջ գտնվող գազատարերի ԷՊԿ-ների տեղադրման և ամբողջական վերազինման աշխատանքների ծրագիրը:

**Անկախվող արդյունքները**

Տեղադրված ԷՊԿ-ները կապահովեն ստորգետնյա գազամուղների մեկուսացման և կոռոզիոն քայքայումից պաշտպանությունը և անխափան շահագործման երկարակեցությունը:

***1.2.5 Էներգամատակարարման համակարգի վերականգնում***

2007-2009թթ. «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ էներգետիկ համակարգի վերականգնման և վերազինման համար նախատեսվող միջոցառումները հիմնականում ուղղված են գազափոխադրման համակարգերի ինժեներական կառույցների հուսալի և անվտանգ էլեկտրա- մատակարարման ապահովմանը:

Գազափոխադրման համակարգում միջոցառումներն ուղղված են գազաբաշխիչ կայանների էլեկտրասնուցման վերականգնմանն ու վերազինմանը, որը բխում է մայրուղային գազատարերի բաշխման կայանների տեխնիկական շահագործման հրահանգից (ՅԵՃՐԱ - 1990):

2007-2009թթ. նախատեսվում են հետևյալ ներդրումները`

## Աղյուսակ 7. Էներգամատակարարման համակարգի վերականգնում

ԻՆ	Մասնաճյուղի անվանումը	Անհրաժեշտ ներդրումներ (մլն. դրամ)					
		2007		2008		2009	
		հ.	գումար	հ.	գումար	հ.	գումար
1	ԳՐԿ-ների էլ. համակարգի վերականգնում	7	7	5	5	5	5
2	«Կողբ» չափիչ հանգույցի էլեկտրամատակարարման	1	25	-	-	-	-
3	ԳՍՊԿ-ի էներգահամակարգի վերականգնում		7		8		8
Ընդամենը		1	39	5	13	5	13

«Կողբ» չափիչ կայանը հանդիսանում է Հայաստանի Հանրապետություն ներկրվող բնական գազի հսկողական չափումների իրականացման հանգուցային կետ, որտեղ կազմակերպված է շուրջօրյա հերթապահություն: «Կողբ» չափիչ կայանում ներկայումս, որպես էներգամատակարարման աղբյուր, շահագործվում է մեկ հատ 140 կՎտ հզորությամբ գազագեներատոր: Հաշվի առնելով վերոհիշյալ կայանի միջպետական նշանակությունը և էներգամատակարարման կարևորությունը՝ որոշում է կայացվել կայանը ապահովել անխափան ու հուսալի էլեկտրամատակարարմամբ՝ համաձայն նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կառուցելով շուրջ 5.5 կմ երկարությամբ 10 կՎ էլեկտրահաղորդման գիծ և 100 կՎԱ հզորությամբ 10/0.4 կՎ տրանսֆորմատորային ենթակայան:

**Ակնկալվող արդյունքները**

Նշված միջոցառումների իրականացման շնորհիվ հնարավորություն կստեղծվի գազափոխադրման համակարգում՝ էլեկտրամատակարարման համակարգը համապատասխանեցնել գործող շահագործման կանոններին, բարձրացնել անվտանգության աստիճանը, արդիականացնել ֆիզիկապես և բարոյապես մաշված էլեկտրասարքավորումները:

***1.2.6. Գազափոխադրման համակարգի հաշվառման բարելավում***

Ելնելով գազափոխադրման համակարգում հաշվառման համալիրի բարելավման անհրաժեշտությունից 2007-2009թթ. նախատեսվում են հետևյալ միջոցառումները (աղյուսակ 8):

Աղյուսակ 8. Գազափոխադրման համակարգի հաշվառման բարելավում

Ի/Ի	Անվանում	Անհրաժեշտ ներդրումներ (նլն. դրամ)					
		2007		2008		2009	
		հ	գումար	հ	գումար	հ	գումար
1	"Armflow" տիպի միկրոպրոցեսորային ծախսաչափիչ համակարգերի ձեռքբերում	5	6.25	5	6.25	3	3.75
2	"FlowBoss" տիպի միկրոպրոցեսորային ծախսաչափիչ համակարգերի ձեռքբերում	5	8.33	5	8.33	5	8.33
3	Արդյունաբերական գազի հաշվիչների ձեռքբերում	7	8.75	8	10	8	10
4	Բնական գազի էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերում	4	2.08	4	2.08	4	2.08
<b>Ընդամենը</b>			<b>25.4</b>		<b>26.7</b>		<b>24.2</b>

“ArmFlow” տիպի միկրոպրոցեսորային ծախսաչափային հանգույցները տեղադրվում են գազաբաշխման կայաններում (ԳԲԿ):

Գազաբաշխման կայանների ընդհանուր թիվը կազմում է 69 հատ:

Մինչև 2007թ. տեղադրվել է 50 հատ ArmFlow տիպի ծախսաչափ:

2007-2009թթ. համար նախատեսվում է տեղադրել ևս 13 հատ նույնատիպ սարք:

“FlowBoss” տիպի միկրոպրոցեսորային ծախսաչափերը տեղադրվում են գազափոխադրման համակարգի գազի չափման հանգույցներում:

Մինչև 2007թ. տեղադրվել է 4 հատ FlowBoss տիպի սարքեր:

2007-2009թթ. համար նախատեսվում է տեղադրել ևս 15 հատ նույնատիպ սարքեր՝

- Հայաստան - Վրաստան սահմանագատման կետում «Կողբ» ծախսաչափային կայանում,

- գազի ստորգետնյա պահեստավորման կայանում (ԳՍՊԿ),

- գազափոխադրման համակարգի գծային շահագործման մասնաճյուղերի կողմից սպասարկվող գազատարերի սահմանագատման կետերում:

**Ակնկալվող արդյունքները**

Գազափոխադրման համակարգի հաշվառման և չափագրական աշխատանքների բարելավում:

1.2.7. Գազափոխադրման համակարգում ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրում

Գազափոխադրման համակարգում 2007-2009թթ. ընթացքում նախատեսվում է հետևյալ ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրում (աղյուսակ 9):

Աղյուսակ 9. Գազափոխադրման համակարգում ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրում

h\h	Անվանում	Անհրաժեշտ ներդրումներ (մլն.դրամ)					
		2007		2008		2009	
		h	գումար	h	գումար	h	գումար
1	DPI-610 տիպի ստուգարկիչների (ստուգաճշտիչների) ձեռքբերում	2	8,33	1	4,17	1	4,17
2	Դյուրատար համակարգչի ձեռքբերում (Pentium IV)	5	3,33	3	2	3	2
3	Կոմունիկատորների ձեռքբերում	4	3,92	2	1,96	2	1,96
4	Elkorr տիպի ճշտիչի համար մարտկոցների ձեռքբերում	10	0,58	10	0,58	10	0,58
5	Ճնշման և ջերմության գրանցասարքեր	10	1,67	10	1,67	10	1,67
6	Դյուրակիր տերմինալ սարքավորումների գնում FlowBoss տիպի ծախսի հսկիչների հետ ինֆորմացիայի փոխանակման համար	2	0,83	1	0,42	1	0,42
7	DPI-610 տիպի ստուգարկիչների համար արսեսուարների ձեռքբերում	1	0,83	1	0,83	1	0,83
8	Corus տիպի ճշտիչի համար արսեսուարների ձեռքբերում	1	0,83	1	0,83	1	0,83
9	ԳԱԶ ավտոմեքենայի բազայի վրա շարժական լաբորատորիայի գնում	1	104,2				
10	Шмель-250 ռենտգեն սարքի գնում	5	11,7				
11	ТЕМП-4 մետաղի ամրության որոշման սարքի գնում	1	0,3				
12	Անդրաձայնային հաստաչափի գնում	3	1,0				
13	Բաժնաչափիչի գնում	5	1,0				
	<b>Ընդամենը</b>		<b>138,5</b>		<b>12,5</b>		<b>12,5</b>

**Ակնկալվող արդյունքները**

Գազափոխադրման համակարգի աշխատանքի էֆեկտիվության բարձրացում, շահագործման ծախսերի նվազեցում:

1.2.8 Գազափոխադրման համակարգի վերակառուցման և ընդլայնում

Գազափոխադրման համակարգի թողունակության ավելացման և ՀՀ կառավարության կողմից նախաձեռնված գազաէներգետիկ նախագծերով նախատեսված պայմանների ապահովման նպատակով Ընկերությունը 2007-2009թթ. նախատեսում է իրականացնել իր գազափոխադրման համակարգի վերակառուցման և ընդլայնում, որը իրենից ներկայացնում է Քաջարանից - Արարատ 197.4 կմ նոր d720 մմ տրամագծով գազատարի կառուցում:

Այդ նպատակի իրականացմանը ուղղված միջոցառումները և աշխատանքները նշված են ստորև բերված աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10. Գազափոխադրման համակարգի վերակառուցում և ընդլայնում

N	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Ներդրումների ծավալը (մլն. դրամ)						Ընդա- մենը
		այդ թվում						
		2007թ.		2008թ.		2009թ.		
		կմ	գումար	կմ	գումար	կմ	գումար	
1	Նախագծա նախահաշվային փաստաթղթերի պատրաստում	-	250	-	0	-	0	250
2	Շինարարական բազայի կառուցում	-	480	-	120	-	0	600
3	Նախապատրաստական աշխատանքներ (վերաբազավորում, ուղեգծի և հարթակների պատրաստում), այդ թվում՝ <i>Քաջարան-Սիսիան</i> <i>Անգեղակոթ-Ջերմուկ</i> <i>Ջերմուկ-Արարատ</i>	121,7	8391	75,7	5219	0	0	13610
	<i>Քաջարան-Սիսիան</i>	55,45	3823	0,0	0	0,0	0	3823
	<i>Անգեղակոթ-Ջերմուկ</i>	42,25	2913	0,0	0	0,0	0	2913
	<i>Ջերմուկ-Արարատ</i>	24	1655	75,7	5219	0,0	0	6874
4	Հիմնական օբյեկտների կառուցում (խրամուղու պատրաստում, խողովակների մոնտաժում), այդ թվում՝ <i>Քաջարան-Սիսիան</i> <i>Անգեղակոթ-Ջերմուկ</i> <i>Ջերմուկ-Արարատ</i>	85,45	4892	88	5035	24	1374	11300
	<i>Քաջարան-Սիսիան</i>	55,45	3174	0,0	0	0,0	0	3174
	<i>Անգեղակոթ-Ջերմուկ</i>	20	1145	22,3	1274	0,0	0	2419
	<i>Ջերմուկ-Արարատ</i>	10	572	65,7	3761	24,0	1374	5707
5	Մետաղական խողովակների ձեռքբերում (մրցույթի կազմակերպում և մատակարարում)	150	15771	50,0	5257	0,0	0	21028
6	Տեխնոլոգիական սարքավորումների ձեռքբերում (մրցույթի կազմակերպում և մատակարարում)	-	520	-	520	-	0	1040
7	Օժանդակ օբյեկտների կառուցում	-	338	-	130	-	52	520
8	Տրանսպորտային տնտեսության և կապի օբյեկտների կառուցում	-	1750	-	673	-	269	2692

9	Գոյություն ունեցող գազատարների համալիր օբյեկտների հետազոտում և վերակառուցում, այդ թվում՝	62,55	591	39,1	369	0	0	960
	Սիսիան-Անգեղակոթ (Փ700մմ)	20,25	191	0,0	0	0,0	0	191
	Անգեղակոթ-Ջերմուկ (Փ500մմ)	42,3	399	0,0	0	0,0	0	399
	Արարատ-Երևան (Փ700մմ)	0	0	39,1	369	0,0	0	369
	<b>Ընդամենը՝</b>		<b>32982</b>		<b>17323</b>		<b>1695</b>	<b>52000</b>

Հայաստանի Հանրապետության գազամատակարարման ապահովության բարձրացման նպատակով ՀՀ Կառավարությունը նախաձեռնել է Իրան-Հայաստան գազատարի շինարարության նախագիծը, որը թույլ կտա ընդլայնել բնական գազի մատակարարման ռեսուրսային բազան, ինչպես նաև ստեղծել բնական գազի մատակարարման երկրորդ մուտքային գիծը Հայաստանի Հանրապետություն: Բանակցությունները իրանական կողմի հետ վերոհիշյալ նախագծի վերաբերյալ տարվել են ՀՀ Կառավարության կողմից սկսած 1993թ-ից: Ներկայումս ձեռք է բերված պայմանավորվածություն բնական գազի շուրջտարյա մատակարարման վերաբերյալ մինչև 2026թ. ընկած ժամանակահատվածում՝ 36մլրդ. մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով:

Սակայն Հայաստանի Հանրապետության տարածքում միայն 40կմ երկարությամբ գազատարի հատվածի կառուցումը չի ապահովի անհրաժեշտ քանակության իրանական գազի տեղափոխումը մինչև հանրապետությունում գործող ջերմային էլեկտրակայանները: Իրանական գազի մատակարարման ծավալները տարեկան 1.1մլրդ.մ<sup>3</sup>-ից մինչև 2.3մլրդ.մ<sup>3</sup> հասցնելու նպատակով անհրաժեշտ է ՀՀ տարածքում կառուցել Dy700մմ տրամագծով և 197.4կմ ընդհանուր երկարությամբ նոր գազատար, և վերակառուցել փոխադրման համակարգում մասնակցող 120կմ ընդհանուր երկարությամբ գոյություն ունեցող գազատարեր:

Ակնկալվող արդյունքները

Ծրագրի իրականացման արդյունքում կապահովվի ՀՀ կառավարության կողմից նախաձեռնված գազաէներգետիկ նախագծերի իրականացումը, ինչպես նաև այլընտրանքային գազամատակարարման աղբյուրի շնորհիվ կբարձրացվի գազամատակարարման համակարգի հուսալիությունը:

1.29. Աբովյանի ԳՍՊԿ-ի վերակառուցման և արդիականացման աշխատանքներ

Հայաստանի Հանրապետության բնական գազի անխափան մատակարարման անընդհատության ապահովման մեջ կարևորագույն և առանձնահատուկ դեր է կատարում Աբովյանի ԳՍՊԿ-ն, որը հանրապետություն գազի ներմուծման դադարեցման ժամանակահատվածներում հաղիսանում է բնական գազի միակ աղբյուր:

ԳՍՊԿ-ն ապահովում է՝

- Երևանի արդյունաբերական շրջանների գազասպառման սեզոնային և պիկային անհավասարությունների կարգավորումը;
- Հանրապետության կարևորագույն սպառողների գազամատակարարումը:

Վրաստանի տարածքով անցնող միակ մայրուղային գազամուղի տեխնիկական անբավարար վիճակը իր մեջ պարունակում է գազամուղի վրա և գազափոխադրման համակարգի այլ օբյեկտներում լուրջ վթարների հնարավորություն, ինչը կարող է խափանել գազի մատակարարումը Հանրապետություն:

Հաշվի առնելով Հայաստանի կախվածությունը ներմուծվող էներգառեսուրսներից, Աբովյանի ԳՍՊԿ-ն, հանդիսանում է Հայաստանի էներգետիկ անվտանգության և անկախության իրական երաշխիք: Անհրաժեշտ է նշել նաև, որ Հայաստանի էներգետիկ ոլորտի կարևորագույն խնդիրներից մեկն է Աբովյանի ԳՍՊԿ-ի նորմալ աշխատանքային վիճակի պահմանումը և միաժամանակ ստորգետնյա պահեստարանում բավականաչափ բնական գազի պահեստավորման համար անհրաժեշտ տեխնիկական և ֆինանսական պայմանների ապահովումը: Աբովյանի ԳՍՊԿ-ն զբաղեցնում է կարևորագույն տեղ Հանրապետության գազի մատակարարման ուղիների զանազանեցման ռազմավարության ուրվագծում: Ապագայում Աբովյանի ԳՍՊԿ-ն կարող է նպաստել բնական գազի տարանցման կազմակերպմանը դեպի երրորդ երկրներ:

Աբովյանի ԳՍՊԿ-ի վերակառուցման և արդիականացման աշխատանքների ծավալները և ժամանակացույցը 2007-2009 թթ. ընթացքում բերված է աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11. Աբովյանի ԳՍՊԿ-ի վերակառուցման և արդիականացման աշխատանքներ

NN	Աշխատանքի անվանում	Նախատեսվող ներդրումներ			
		Ընդամենը	2007	2008	2009
1	Աղաջրերի պահեստարանի կառուցում (150հազ մ3)	44,0	44,0	0,0	0,0
2	2-րդ աղաջրերի պահեստարանի կառուցում (400հազ մ3)	270,0	270,0	0,0	0,0
3	Աղաջրերի միջանկյալ ավազանների վերականգնում (4 հատ x 1000 մ3)	35,2	35,2	0,0	0,0
4	Աղաջրատարի կառուցում (4 միջանկյալ ավազանների և աղաջրերի պահեստարանի կապակցում)	23,1	23,1	0,0	0,0
5	Աղաջրատարի և տեխնիկական ջրամատակարարման համակարգերի վերակառուցում	77,0	77,0	0,0	0,0
6	ԷՔՊ համակարգի վերականգնում	16,5	8,3	8,3	0,0
7	Հորերի համալիր գեոֆիզիկական հետազոտում (NN 12Դ, 13Դ, 3Դ, 10Դ, 16Դ, 6Դ, 9Դ)	240,5	123,3	77,5	39,7
8	Վթարային հորերի վերանորոգման վերականգնման աշխատանքներ	613,6	191,5	411,0	11,0
9	I-III Ընդլայման հերթափոխի շահագործվող հորերի համալիր գեոֆիզիկական հետազոտում	79,4	0,0	0,0	79,4
10	I-III Ընդլայման հերթափոխի հորերի վերանորոգման վերականգնման աշխատանքներ և վերջնական ողողում	430,6	22,0	150,6	257,9
11	Ընդլայման IV հերթափոխի հորերի շինարարություն	258,1	107,9	79,6	70,5
12	ԱԲԵ-100 տիպի հորատման ագրեգատի ձեռք բերում	466,4	466,4	0,0	0,0
13	Հիդրոլոկատորի ձեռք բերում	58,3	58,3	0,0	0,0
14	Ճնշակայանի արտադրամասի վերակառուցում	2398,7	0,0	0,0	2398,7
	<b>Ընդամենը</b>	<b>5011,3*</b>	<b>1427,0</b>	<b>727,0</b>	<b>2857,3</b>

\*) ԳՍՊԿ-ի վերակառուցման և արդիականացման աշխատանքները այսքանով չեն ավարտվում և շարունակվելու են 2009 թ. հետո:

Ակնկալվող արդյունքները

Աբովյանի ԳՍՊԿ-ի զարգացման համար 2007-2009թթ. ներդրումային ծրագրով նախատեսված ներդրումները կնպաստեն բնական գազի պահեստավորման ամբողջ համակարգի կայուն աշխատանքին: Աղաջրերի համալիր համակարգի շինարարությունը հնարավորություն կնձեռնի ոչ միայն իրականացնել միջոցառումներ, ուղղված պահեստավորվող բնական գազի տարեկան պլանավորվող ծավալների ապահովմանը, այլ նաև կնպաստի այդ ծավալների մեծացմանը՝ հասցնելով նախագծային կամ նախագծային մոտ հզորություններին:

Ակտիվ միջավայրում գործող ինժեներական կոմունիկացիաների (գազատարներ, ջրատարներ և աղաջրատարներ) և ֆոնտանային ամրանների վրա ԷՔՊ-ի տեղադրման միջոցառումների իրականացումը կբերի նրանց երկարակեցությանը՝ շահագործման ժամկետի երկարացմանը:

Նորագույն տեխնոլոգիական ենթակառուցվածքներով նոր ճնշակայանի կառուցումը և հավաքակցումը թույլ կտա ոչ միայն ավելի արդյունավետ օգտագործել պահեստավորվող բնական գազի ծավալները, այլ նաև, ինչը ոչ պակաս կարևոր է, անհամեմատ նվազեցնել տարեկան շահագործման ծախսերը՝ իրեն ֆիզիկական և բարոյական համարյա ամբողջ աշխատանքային ռեսուրսները սպառած գոյություն ունեցող ճնշակայանի համեմատ:

Բ Ա Ժ Ի Ն 2

Գազաբաշխման համակարգ

**Բաժին 2. Գազաբաշխման համակարգ**

*2.1. Ներդրումային ծրագրում նախատեսվող միջոցառումներ*

1. Բնական գազի աճող պահանջարկի բավարարում, գազաբաշխման ցանցի շինարարություն:
2. Նոր բաժանորդների համար գազահաշվիչների ձեռք բերում և տեղադրում:
3. Նախկինում գործող գազահամակարգի վերականգնում, փոխարինում և վերակառուցում:
4. Գազաբաշխման համակարգի հաշվառման համալիրի բարելավում, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրում:
5. Էլեկտրաքիմյական պաշտպանիչ (ԷՊԿ) կայանների վերականգնում:
6. Էներգամատակարարման համակարգի արդիականացում:

*2.2. Նախատեսվող ներդրումներ*

Սույն ենթաբաժնում ներկայացվում են 2007-2009թթ. ընթացքում գազաբաշխման համակարգում նախատեսվող ներդրումները:

Միջոցառումները մշակելիս կիրառվել է տեղայնացված մոտեցում, հիմք են ընդունվել տեղերում կատարված հետազոտման և ախտորոշման արդյունքները ու դրանց հիման վրա կազմված թերությունների ակտերը: Ամփոփումից հետո միջոցառումները ներկայացված են ծավալագումարային տեսքով (աղյուսակ 11):

Աղյուսակ 11. Գազաբաշխման համակարգում նախատեսվող ներդրումներ

h/h	Հիմնական ուղղվածություն	Միջոցառումների անվանումը	տարի (մլն.դրամ)		
			2007	2008	2009
1	<b>Բաշխման գազատարներ</b>	Շինարարություն	416,7		
2		Գազահաշվիչներ	1400,0	840,0	560,0
3		Վերականգնում	935,1	676,7	798,3
4		Հաշվառման համակարգի բարելավում	172,5	118,4	105,9
5		Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրում	169,4	57,6	54,1
6		ԷՊԿ տեղադրում	129,9	130,2	240,2
7		Էլ.համակարգի արդիականացում	58,1	37,9	40,6
<b>Ընդամենը</b>			<b>3281,7</b>	<b>1860,8</b>	<b>1799,1</b>

### 2.2.1 Գազաբաշխման ցանցի շինարարություն

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ սկսած 2001թ.–ից հանրապետության տարածքում իրականացնում է լայնածավալ գազաֆիկացման աշխատանքներ, որի արդյունքում առ 01.01.2007թ. դրությամբ հանրապետության շուրջ 610.0 հազ. տնտեսություններ հնարավորություն ունի օգտվելու բնական գազից, որոնցից 2006 թ. վերջին շուրջ 440.0 հազ.–ը կհանդիսանան փաստացի գազասպառողներ Մոտ 170.0 հազ. տնտեսություններ կհանդիսանան պոտենցիալ բաժանորդներ

2007թ. ընթացքում գազաֆիկացման ծրագրի շրջանակներում կիրականացվի 0.5 մլրդ. դրամի շին-հավաքակցման աշխատանքներ և շահագործման կհանձնի 1.0 (ԱԱՀ-ով) մլրդ. դրամի հիմնական միջոցներ

### 2.2.2. Նոր բաժանորդների գազահաշվիչների ձեռք բերում և տեղադրում

2007թ. ընթացքում համակարգում առկա մոտ 170.0 հազ. պոտենցիալ բաժանորդներից և նոր շահագործման հանձնված հիմնական միջոցների արդյունքում ձեռք բերվող հնարավոր բաժանորդներից 50 000-ը կդառնան փաստացի գազասպառողներ, որոնց գազաթողարկման համար կտեղադրվեն 50 000 կոմպլեկտ կենցաղային գազահաշվիչներ 1.4 մլրդ. դրամ արժեքով: 2008 և 2009 թթ. վերոհիշյալ պոտենցիալ բաժանորդներից ևս 50 000 բաժանորդներ կդառնան փաստացի գազասպառողներ, որոնց գազաթողարկման համար անհրաժեշտություն կառաջանա տեղադրելու համապատասխանաբար 30 000 (0.84 մլրդ. դրամ) և 20 000 (0.56 մլրդ. դրամ) կոմպլեկտ կենցաղային գազահաշվիչներ:

*2.2.3. Գազաբաշխման համակարգի վերականգնում, փոխարինում, վերակառուցում*

2007 թ. գազաբաշխման համակարգում նախատեսված է 25665 մ վերգետնյա գազատարների վերականգնում և 66497 մ ստորգետնյա գազատարների վերատեղադրում, որի համար անհրաժեշտ է 935.1 մլն. դրամի ներդրումներ, այդ թվում` 81.7 մլն դրամ հետազոտման և նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների համար: Նշված աշխատանքների ամփոփ տեսքը, ըստ ԳԳՄ-ների բերված է աղյուսակ 14 - ում:

## Աղյուսակ 14. Գազաբաշխման համակարգում վերականգնում և վերատեղադրում

Մասնաճյուղի Անվանումը	Վերգետնյա վերականգնում գծ.մ	Ստորգետնյա վերատեղադրում գծ.մ	Ընդ. գծ.մ	Պահանջ. ներդրում վերականգնում	Պահանջ. ներդրում վերատեղադրում	Պահանջ. ներդրում
1. Երևանի գգՄ	7714,0	7314,0	15028,0	15,8	330,2	346,0
2. Լոռու գգՄ	1000,0	9726,0	10726,0	0,6	68,7	69,3
3. Կոտայքի գգՄ	0,0	1077,0	1077,0	0,0	18,5	18,5
4. Արարատի գգՄ	10759,0	985,0	11744,0	20,9	26,3	47,2
5. Մարտունու գգՄ	0,0	4615,0	4615,0	0,0	30,8	30,8
6. Սյունիքի գգՄ	400,0	5177,0	5577,0	2,1	35,3	37,4
7. Սևանի գգՄ	0,0	7250,0	7250,0	0,0	38,3	38,3
8. Գավառի գգՄ	0,0	3573,0	3573,0	0,0	34,2	34,2
9. Վայոց Ձորի գգՄ	0,0	810,0	810,0	0,0	10,8	10,8
10. Աբովյանի գգՄ	0,0	2700,0	2700,0	0,0	26,7	26,7
11. Գյումրիի գգՄ	450,0	2850,0	3300,0	0,0	27,3	27,3
12. Արագածոտնի գգՄ	0,0	2769,0	2769,0	0,0	23,5	23,5
13. Շիրակի գգՄ	1500,0	7978,0	9478,0	2,5	33,9	36,4
14. Արմավիրի գգՄ	3842,0	2552,0	6394,0	0,0	33,6	33,6
15. Արտաշատի գգՄ	0,0	1637,0	1637,0	3,6	21,9	25,4
16. Տավուշի գգՄ	0,0	2100,0	2100,0	2,3	8,9	11,2
17. Էջմիածնի գգՄ	0,0	3384,0	3384,0	2,1	34,9	36,9
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>25665,0</b>	<b>66497,0</b>	<b>92162,0</b>	<b>49,7</b>	<b>803,7</b>	<b>853,4</b>
Գազատարների հետազոտում						40,0
ՆՆՓ-ների կազմում						41,7
<b>ԱՄԲՈՂՋ</b>						<b>935,1</b>

Ծանոթություն՝ Պահանջվող ներդրումների չափը ըստ հետազոտման արդյունքների ենթակա է ճշտման:

**Անկալվող արդյունքները**

Նշված միջոցառումների իրականացումը կրերի գաբաշխման ցանցի աշխատանքային ռեժիմների բարելավմանը, վթարների նվազեցմանը և անվտանգ շահագործմանը:

*2.2.4. Գազաբաշխման համակարգի հաշվառման համալիրի արդիականացում*

Գլխամասային հաշվիչ-հանգույցներում ճշտիչների տեղադրումը ապահովում է գազի մեծ հոսքի հստակ հաշվառում՝ բնական գազի քանակի հաշվարկի ժամանակ ճնշման, ջերմաստիճանի և սեղմելիությունը հաշվի առնող գործակիցների ճշգրիտ կիրառմամբ:

Աղյուսակ 15. 2007-2009 թթ. գազաբաշխման համակարգի հաշվառման համալիրի արդիականացում

հ/հ	Անվանում	Անհրաժեշտ ներդրումներ (մլն. դրամ)					
		2007		2008		2009	
		հ	գումար	հ	գումար	հ	գումար
1	"Armflow" տիպի միկրոպրոցեսորային ծախսաչափիչ համակարգերի ձեռքբերում	10	12,50	5	6,3	5	6,3
2	Բնական գազի գլխամասային հաշվիչների ձեռքբերում և տեղադրում	70	87,50	40	50,0	30	37,5
3	Գազի ծավալի էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերում	50	20,8	25	10,4	25	10,4
4	Նախկինում տեղադրված այլ արտադրության կենցաղային հաշվիչների փոխարինում Premagas, Actaris (Shlumberger) ֆիրմաների արտադրության կենցաղային հաշվիչներով	2000	51,7	2000	51,7	2000	51,7
<b>Ընդամենը</b>			<b>172.5</b>		<b>118.4</b>		<b>105.9</b>

ՀՀ գազի համակարգի վերականգնման ժամանակ 1996-1998թթ. ընթացքում օգնության կարգով հանրապետություն են ներկրվել շուրջ 10 հազ. հատ

- ամերիկյան metric G6
- գերմանական GT4
- ֆրանսիական Magnol G4
- կորեական
- ռուսական

արտադրության կենցաղային գազահաշվիչներ, որոնց տիպերը ՀՀ օգտագործման համար «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից հաստատված չեն և հետևապես այդպիսի հաշվիչներով գազի հաշվառումը արգելվում է:

**Անկախորդ արդյունքները**

Գազաբաշխման համակարգի հաշվառման և չափագրական աշխատանքների բարելավում:

**2.2.5. Գազաբաշխման համակարգի ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրում**

ժամանակակից տեխնիկայի (տրամաչափիչների, հայտնաբերիչների, անալիզատորների և այլն) ձեռք բերման համար անհրաժեշտ ներդրումները բերված են աղյուսակ 16-ում:

Աղյուսակ 16. 2007-2009 թթ. ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրում

Ի/Ի	Անվանում	Անհրաժեշտ ներդրումներ (մլն. դրամ)					
		2007		2008		2009	
		հ	գումար	հ	գումար	հ	գումար
1	Նոր սերնդի ճշտիչների մշակում՝ գազի հաշվիչներում ճնշման անկման չափումով	10	5,83	10	5,83	10	5,83
2	500 արոնենտի կենցաղային հաշվիչներից տեղեկատվության հեռափոխադրման համակարգերի ձեռքբերում	1	12,50				
3	RPT-3 տիպի տուրբինային հաշվիչների համար էլեկտրոնային հաշվիչ մեխանիզմի փորձա-արդյունաբերական նմուշների մշակում	3	1,25				
4	Կանխավճարային համակարգով գազի հաշվիչների ձեռքբերում	50	2,08				
5	Elkorr տիպի ճշտիչի համար մարտկոցների ձեռքբերում	50	2,92				
6	Տուրբինային և ռոտացիոն հաշվիչների փորձատեղի արդիականացում (իմպուլսների բարձր հաճախականության փոխարկիչներ)		1,67				
7	կենցաղային հաշվիչների փորձատեղի ձեռքբերում կանոնավոր ծայրափողակներով	1	33,33				
8	Հայաստանում և արտասահմանում կադրերի վերապատրաստման համար ֆինանսական ներդրումներ*		20,83		20,83		20,83
9	Մեթոդական և նորմատիվա-տեխնիկական նյութերի մշակում		8,33		8,33		8,33
10	Հաշվիչների լրացուցիչ սխալանքների՝ (պայմանավորված տեղային դիմադրությամբ) չափման մեթոդիկայի մշակում		16,67				
11	Նոր սերնդի գազի ծախսաչափերի փորձանմուշների մշակում	3	5,00				

13	Չափիչ հանգույցների վերազինում նոր միջպետական ստանդարտներին համապատասխան		4,17		4,17		4,17
14	Անդրաձայնային արատացույցի (դեֆեկտոսկոպի) ձեռքբերում YД 21P տիպի	1	2,50				
15	Արտահոսքի փնտրիչ սարքերի ձեռքբերում DP4 տիպի	6	12,50	4	8,33	2	4,17
16	Խողովակների մեկուսացման վնասվածության տեղի փնտրիչ սարքի ձեռքբերում	7	7,50	5	5,83	5	5,83
17	Հեռաչափի ձեռքբերում նախագծային աշխատանքների կազմակերպման համար	2	0,42				
18	Համակարգչի ձեռքբերում	21	7,00	5	1,67	5	1,67
19	Համակարգչային սարքավորումների ձեռքբերում	12	5,00	3	1,25	3	1,25
20	Խողովակափնտրիչ սարքի ձեռքբերում	3	2,50				
21	Չայնագրիչ սարքով կապի սարքավորման ձեռքբերում	2	3,33				
22	Ծխագազերի արտաձգման որոշիչ սարքի ձեռքբերում	40	2,50				
23	Գազի վերլուծիչ-հոտաչափիչի ձեռքբերում	1	1,67				
24	Դյուրատար համակարգչի ձեռքբերում	6	2,00	4	1,33	6	2,00
25	Բնական գազի ֆիզիկաքիմիական բնութագրերի որոշման համար «Քրոմատեկ-Կրիստալ 2000Մ» տիպի քրոմատոգրաֆի ձեռքբերում	1	7,92				
<b>Ընդամենը</b>			<b>169.4</b>		<b>57.6</b>		<b>54.1</b>

\*) Սակագնի Այլ ծախսեր հոդվածի «Գազի համակարգի կադրերի պատրաստում» տողում ներառված են միայն համակարգի ինժեներա-տեխնիկական անձնակազմի պարտադիր պլանային ուսուցումը «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ ուսումնական կենտրոնի միջոցով:

Իսկ նշված կետով ծախսերը՝

- Երևանի ճարտարապետա-շինարարական պետական համալսարանում պատրաստվող տարեկան 10 ինժեներական կադրերի,

- Աբովյանի էներգետիկական պետական քոլեջում «Տեխնիկ-չափագետ» և «Ներտնային համակարգի սպասարկման» գծով տեխնիկների տարեկան յուրաքանչյուր մասնագիտության գծով 10 մասնագետների,

- Գուբկինի անվան «Նավթի և գազի» ռուսական պետական ինստիտուտում թվով 4 ինժեներական կադրերի

պատրաստման համար կատարվող ծախսերն են:

**Անկալվող արդյունքները**

Գազաբաշխման համակարգի աշխատանքի էֆեկտիվության բարձրացում, շահագործման ծախսերի նվազեցում:

2.2.6. Գազաբաշխման համակարգի էլեկտրաքիմիական պաշտպանություն

Գազաբաշխման համակարգի ստորգետնյա ցանցի էլեկտրաքիմիական պաշտպանության կազմակերպումը ուղղված է ազրեսիվ գրունտների կոռոզիոն ակտիվության և թափառող հոսանքների հետևանքով առաջ եկող քայքայման դեմ, որը պահանջվում է ԳՏԱ Կանոնների 5.27 կետով և ԳՈՍՏ Ռ 51164-98 փաստաթղթով:

Պաշտպանիչ կայանների վերականգնումը և կառուցումը մշտապես նախատեսվում է տարեկան ծրագրերով, վերականգնելու համար գազամատակարարման դադարեցման շրջանում տեղի ունեցած կայանների վերացման և ապօրինի ապահավաքակցման բազմաթիվ դեպքերից առաջացած կորուստները:

Նախատեսվում է 2007թ. գազաբաշխիչ համակարգում էլեկտրապաշտպանիչ կայանների տեղադրումը առավել կոռոզիոն տեղամասերում` 50 հատ և 292 կցաշուրթային միացումների պատրաստում և տեղադրում, ընդհանուր 91.2 մլն. դրամ (աղյուսակ 17):

Աղյուսակ 17. Գազաբաշխման համակարգի ԷՊԿ-երի տեղադրում

հ/հ	Միջոցառման անվանումը	Անհրաժեշտ ներդրումներ (մլն. դրամ)					
		2007		2008		2009	
		հ.	գումար	հ.	գումար	հ.	գումար
1	ԷՊԿ-երի տեղադրում*	50	120	50	120	94	230
2	Կցաշուրթային միացումների պատրաստում և տեղադրում**	292	9.9	300	10.2	300	10.2
	<b>Ընդամենը</b>		<b>129.9</b>		<b>130.2</b>		<b>240.2</b>

\*) ներառյալ ՆՀԱ

\*\*)Պատրաստման արժեքը բերված է միջինացված տրամագծի համար:

Առ 31.12.06 թ.-ի դրությամբ գազաբաշխման համակարգում շահագործվում է թվով 387 կայան: 2007-2009 թթ. նախատեսվում է տեղադրել 194 հատ էլեկտրապաշտպանիչ կայան, իսկ ընդհանուր առմամբ գազաբաշխման համակարգը կարիք ունի մոտ 800 հատ էլեկտրապաշտպանիչ կայանի:

Անկալվող արդյունքները

Տեղադրված ԷՊԿ-ները կապահովեն ստորգետնյա գազաբաշխման ցանցի մեկուսացման և քայքայումից (կոռոզիա) պաշտպանությունը և անխափան շահագործման երկարակեցությունը:

2.2.7. Էներգամատակարարման համակարգի արդիականացում

Գազաբաշխման համակարգում գործող էլեկտրական հաշվիչները նոր էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչներով փոխարինում:

2007-2009թթ.-ին նախատեսվում է իրականացնել որոշ ԳԳՄ-ների վարչական շենքերի ջեռուցման համակարգերի տեղադրում (աղյուսակ 18):

Աղյուսակ 18. Էներգամատակարարման համակարգի արդիականացում

հ/հ	Անվանում	Անհրաժեշտ ներդրումներ (մլն. դրամ)					
		2007		2008		2009	
		հ	գումար	հ	գումար	հ	գումար
1	ԳԿԿ-ների էլ. համակարգի վերականգնում	45	7,5	50	8,3	75	12,5
2	Գործող էլեկտրական հաշվիչները նոր բազմասակագնային հաշվիչներով փոխարինում						
2.1	<i>էլեկտրոնային եռաֆազ</i>	6	0,4	7	0,5	7	0,5
2.2	<i>էլեկտրոնային միաֆազ</i>	15	0,1	18	0,2	17	0,1
3	Բարձրավոլտ մալուխային գծի վերականգնում (մետր)	1200	10,0	750	6,3	800	6,7
4	ՊԳԿԿ -ի համար գազայրիչների սարքերի գնում և տեղադրում	150	6,3	200	8,3	200	8,3
5	35/6 կՎ տրասֆորմատորային ենթակայանի վերակառուցում		4,6		3,9		4,2
6	ԳԳՄ-ների վարչական շենքերի կենտրոնացված ջեռուցման համակարգի ստեղծում	7	16,7	5	10,4	4	8,3
7	«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ շենքի կենտրոնացված ջեռուցման համակարգի արդիականացում	2	12,5				
<b>Ընդամենը</b>			<b>58,1</b>		<b>37,9</b>		<b>40,6</b>

Անկալվող արդյունքները

Կաթսայական ագրեգատների և էլեկտրոնային հաշվիչների տեղադրումը հնարավորություն կստեղծի նվազեցնել սպառվող էլեկտրաէներգիայի վարձավճարը և քանակը:

## Բ Ա Ժ Ի Ն 3

Գազափոխադրման և գազաբաշխման  
համակարգերի շահագործման և  
սպասարկման ծառայությունների ոլորտներում  
նախատեսված ներդրումային ծրագրեր

**Բաժին 3. Գազափոխադրման և գազաբաշխման համակարգերի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտներում նախատեսված ներդրումային ծրագրեր**

2007-2009թթ. ընթացքում համակարգում նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ ներդրումային ծրագրերը (աղյուսակ 19), ուղղված՝

- շենքերի և շինությունների կառուցման, ձեռք բերման և ընդլայնման;
- ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռք բերման;
- աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի, վթարային ծառայության, արտակարգ իրավիճակների, հրդեհային անվտանգության;
- կապի համակարգի բարելավման:

Աղյուսակ 19. Համակարգերի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտներում նախատեսված ներդրումային ծրագրեր

h/h	Հիմնական ուղղվածություն	Միջոցառումների անվանումը	տարի (մլն.դրամ)		
			2007	2008	2009
1	Շենքեր, շինություններ	Բարեկարգում, ընդլայնում	970,0	254,6	172,1
2	Ավտոտրանսպորտ	Ձեռք բերում	467,8	216,4	218,0
3	Աշխ.պաշտպանութ	Համալրում	17,7	22	12
4	Կապ	Ռադիոկապի ներդրում	155,7	76,7	57,0
<b>Ընդամենը</b>			<b>1611,2</b>	<b>569,7</b>	<b>459,1</b>

**3.1 Շենքերի և շինությունների կառուցման, ձեռք բերման և ընդլայնման միջոցառումներ**

Գազաբաշխման համակարգի զարգացման և գազամատակարարման վերականգնման արդյունքում ստեղծվող նոր ծառայությունների և տեղամասերի գործունեության կազմակերպման նպատակով ըստ 2007-2009 թթ. ներդրումային ծրագրի նախատեսվում է կառուցել, ընդլայնել կամ ձեռք բերել շենքեր և շինություններ (աղյուսակ 20):

Աղյուսակ 20. Շենքեր շինությունների կառուցման, ձեռք բերման և ընդլայնման միջոցառումներ

ԻՆ	Մասնաճուղ	Անհրաժեշտ ներդրումներ (մլն. դրամ)		
		2007	2008	2009
1	Երևան	241,6	120,8	104,2
2	Գյումրի	1,7	2,5	1,7
3	Շիրակ	14,2	5,8	1,7
4	Լոռու	8,3	12,5	10,0
5	Տավուշ	1,7	5,0	5,8
6	Արագածոտն	2,5	9,6	0,0
7	Արմավիրի	48,3	6,7	12,5
8	Էջմիածին	18,3	1,7	10,0
9	Արարատ	18,8	0,0	5,0
10	Արտաշատ	0,0	41,7	4,2
11	Վայոց Ձոր	0,8	8,3	5,8
12	Սյունիք	4,2	20,8	4,2
13	Գավառ	0,8	5,0	0,0
14	Սևան	2,5	4,2	0,0
15	Մարտունի	1,7	0,8	5,8
16	Արմավյան	2,9	4,2	0,0
17	Կոտայք	1,7	5,0	1,3
18	«Հայրուսզագարդ» ՓԲԸ	600	-	-
<b>Ընդամենը</b>		<b>970,0</b>	<b>254,6</b>	<b>172,1</b>

2007 թ. ընթացքում համակարգի վարչական շենքերի և օժանդակ շինությունների համար նախատեսվում է իրականացնել 970 մլն.դրամի աշխատանքներ:

**Ակնկալվող արդյունքները**

Ելնելով սանիտարա-հիգիենիկ նորմերի պահանջներից և աշխատանքի արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունից նշված միջոցառումների իրականացման շնորհիվ հնարավորություն կստեղծվի ապահովել նորմալ աշխատանքային պայմաններ:

**3.2. Ավտոտրանսպորտային միջոցների ձեռք բերման միջոցառումներ**

2007-2009թթ. ավտոտրանսպորտային միջոցների ձեռք բերման ծրագիրը ըստ գազափոխադրման և գազաբաշխման համակարգերի բերված է աղյուսակ 21-ում:

Աղյուսակ 21. Ավտոտրանսպորտային միջոցների ձեռք բերման միջոցառումներ

1	Տրանսպորտային միջոցների և մեխանիզմների անվանումը և բնութագիրը	Ներդրումները ըստ տարիների					
		2007թ.		2008թ.		2009թ.	
		հատ	մլն.դրամ	հատ	մլն.դրամ	հատ	մլն.դրամ
3	5	7					
<b>Տրանսպորտային միջոցներին և մեխանիզմներին ներդրումներ</b>							
1	Էքսկավատոր հիրավիլիկ անհիվավոր, շերտեր 0,25 մ3	-	0,0	-	0,0	1	16,2
2	Էքսկավատոր հիրավիլիկ անհիվավոր, EK-14-20 շերտեր 0,25 մ3	-	0,0	1	27,9	-	0,0
3	Շարժական օդային մղիչ PIP-10 9-12 մ3/րոպե արտադրողականությամբ	1	3,2	-	0,0	-	0,0
4	Ջրահեռացման ագրեգատ YBT-500 տրակտորի կառուցվածքի վրա	-	0,0	1	3,2	-	0,0
5	Շարժական էլեկտրագոյիչ ագրեգատ АДД տիպի	2	3,1	-	0,0	-	0,0
6	«Վալրայ» ԳԱԶ 33104	1	6,9	-	0,0	-	0,0
7	ՈՒԱԶ 330301	1	4,6	-	0,0	1	4,6
8	ՈՒԱԶ 3909	3	11,9	-	0,0	3	11,9
9	ՆԻՎԱ 21230 GLS	1	6,4	1	6,4	1	6,4
10	ՆԻՎԱ ՎԱԶ 21214	1	4,2	1	4,2	1	4,2
	<b>ԸՆդամենը</b>	<b>10</b>	<b>40,3</b>	<b>4</b>	<b>41,7</b>	<b>7</b>	<b>43,3</b>
<b>Գազաբաշխման համակարգ</b>							
1	Հատուկ. այդ թվում	13	49,3	8	36,0	8	36,0
1,1	Օպերատիվ մեքենա	13	49,3	8	36,0	8	36,0
2	Մեխանիզմ, այդ թվում	61,0	333,2	22,0	108,7	22,0	108,7
2,1	Ավտոմեքենաներ	1	16,0	2	32,0	2	32,0
2,2	Գնչակ	17	136,0	2	18,0	2	18,0
2,3	Եռակցման կերպափոխիչ	32	60,2	15	25,7	15	25,7
2,4	Էքսկավատոր	11	121,0	3	33,0	3	33,0
3	Ավտոմեքենաների վերասարքավորում*	25	45,0	18	30,0	18	30,0
	<b>ԸՆդամենը</b>		<b>467,8</b>		<b>216,4</b>		<b>218,0</b>

\*) Հաշվի առնելով վթարային ծառայության ավտոպարկի թարմացման և համալրման անհրաժեշտությունը և ելնելով տնտեսական արդյունավետության նկատառումներից, նախատեսվում է հեղուկ գազի տեղափոխման բնագավառում մասնագիտացված ԳԱԶ-52 USA-1 մակնիշի ավտոմեքենաները հիմնանորոգել և վերասարքավորել ԳՎԿՍ (գազի վթարա-վերանորոգման մեքենա) տեսակի ավտոմեքենաների:

**Ակնկալվող արդյունքները**

Մեքենաների և մեխանիզմների ձեռք բերման արդյունքում Տրանսպորտային միջոցային միջոցները լիակատար ապահովված կլինեն գազատարների շինարարության (հողային աշխատանքների, եռակցման աշխատանքների), հատուկ և դժվարամատչելի տեղամասերում (գառնափեր, կամուրջներ, կախովի անցումներ, հենային թռիչքներ), ինչպես

նաև շահագործման ընթացքում վթարների արագ արձագանքման աշատանքները ժամանակին և պատշաճ մակարդակով իրականացման համար:

*3.3. Աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի, վթարային ծառայության, արտակարգ իրավիճակների, հրդեհային անվտանգության, աշխատողների ուսուցման և որակավորման բարձրացման միջոցառումներ*

2007-2009 թթ. աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի, վթարային ծառայության, արտակարգ իրավիճակների, հրդեհային անվտանգության ուղղությամբ նախատեսվում են հետևյալ ներդրումներ (աղյուսակ 24):

Աղյուսակ 24. 2007-2009 թթ. անհրաժեշտ ներդրումներ

h/h	Միջոցառման անվանումը	Չափման միավոր	Անհրաժեշտ ներդրումներ		
			2007	2008	2009
1	Վթարային կարգավարական ծառայության	մլն. դրամ	4.5	4	4
2	Արտակարգ իրավիճակներ, Քաղպաշտպանություն և հրդեհային անվտանգություն	մլն. դրամ	13.2	18	8
	<b>Ընդամենը</b>		<b>17.7</b>	<b>22</b>	<b>12</b>

Հիմք ընդունելով 29.12.1998թ. Հ.Օ-265 ՀՀ օրենքը և համաձայն «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ «Արտակարգ իրավիճակների և Քաղպաշտպանության հանձնաժողով»-ի կանոնակարգի, արտակարգ իրավիճակների և պատերազմական դրության դեպքում Ընկերության «Արտակարգ իրավիճակների հանձնաժողով»-ը տեղակայվում է Ընկերության վարչական շենքի կառավարման կետում (ապաստարան 1)՝ Կառավարման վահանակից՝, հուսալի հեռախոսակապի, ռադիոկապի առկայության, տեղանքների պլանշետների և այլ անհրաժեշտ պարագաներով հագեցվածության պայմաններում, համագործակցելով ՀՀ կառավարության լիազորած անձի, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, հարևան կազմակերպությունների հանձնաժողովների և Ընկերության ստորաբաժանումների հետ իրականացնում է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ ԱԻ և ՔՊ հանձնաժողովի կանոնակարգով ամրագրված և նշված իրադրություններում ծառայած խնդիրների լուծմանն ու կանխարգելմանը ուղղված միջոցառումներ:

### Ակնկալվող արդյունքները

Նախատեսվող միջոցառումները նպատակաուղղված են՝

1. Աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի գծով՝
  - աշխատանքի պրոցեսում մարդու անվտանգության, առողջության և աշխատունակության պահպանմանը.
  - գազահամակարգի աշխատակիցներին արտադրական դժբախտ դեպքերից, պատահարներից, հիվանդություններից զերծ պահելուն.

#### *3.4. Կապի համակարգում բարելավման միջոցառումներ*

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ գազաբաշխման համակարգում հայտնաբերված վթարների վերաբերյալ տեղեկատվության համակարգման և օպերատիվ արձագանքման, վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման նպատակով համակարգում ներկայումս գործում են շուրջ 141 գերկարձալիք ռադիոկայաններ: Գազաբաշխման համակարգում առկա են ԳԳՄ-ներ, որոնց սպասարկան տարածքում գերկարձալիք ռադիոկապի միջոցներ ընդհանրապես չկան՝ մասնավորապես Վայուց Ձորի, Լոռու, Արմավիրի, Էջմիածնի և Աբովյանի ԳԳՄ-ներ: 2007թ.-ին նախատեսվում է ներդնել ռադիոկայաններ վերոհիշյալ բոլոր ԳԳՄ-ում:

*Գազափոխադրման համակարգում ռադիոռելեային գործող կապի արդիականացում և ընդլայնում:*

Ներկայումս «Տրանսգազ» ՍՊԸ համակարգում գործում են թվով 48 ռադիոռելեային կայաններ, որոնց միջոցով ապահովվում է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ ԿԿ վարչության, ինչպես նաև «Տրանսգազ» ՍՊԸ դիսպետչերական ծառայության և ԳԲԿ-ների, տարածքային ԳՇՄ-ների ու շրջիկ փականագործների միջև օպերատիվ կապը: 2007-2009թթ. ընթացքում նախատեսվում է հանրապետությունում գործող բոլոր ԳԲԿ-ները, ինչպես նաև ԳՇՄ-ները համալրել նոր ռադիոռելեային կապի միջոցներով, միաժամանակ արդիականացնելով ներկայումս շահագործվող ռադիոռելեային կապի միջոցները:

Հաշվի առնելով Հանրապետությունում գործող բջջային կապի համակարգերի նոր զարգացումները անհրաժեշտություն է առաջացել «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ բնական գազի տեղափոխման համակարգում գործող տեխնոլոգիական կապը համալրել նաև բջջային կապի միջոցներով: Վերջիններիս ներդրումը հնարավորություն կստեղծի առավել օպերատիվ կառավարել պրոցեսները:

Ստորև բերվում է կապի համակարգում բարելավման միջոցառումների համար անհրաժեշտ գումարային ներդրումների ծավալը (աղյուսակ 26):

Աղյուսակ 26. Կապի համակարգի բարելավման անհրաժեշտ ներդրումների ծավալը

հ/հ	Անվանում	Անհրաժեշտ ներդրումներ (մլն. դրամ)					
		2007		2008		2009	
		հ	գումար	հ	գումար	հ	գումար
1	ԳԲԿ և ՉՀ բջջային կապի ներդրում	30	1,3	10	0,4		0,4
2	Երևան-Արարատ գազամուղի ՌՌ կապի արդիականացում	5	1,0				
3	Nokia ՌՌ կապի արդիականացում	16	25,0				
4	Դիսպետչերական կապի ռադիոկայանների փոխարինում	32	12,9				
5	ԳԳՄ-երի տեխնոլոգիական կապի արդիականացում և ընդլայնում	120	37,7	65	33,4	72	33,8
6	ԳԳՄ վարչական շենքերի լոկալ հերախոսակայանների տեղադրում	3	2,3	6	4,5	7	5,3
7	Շրջիկ լաբորատորիայի ձեռք բերում, կապի համակարգի անխափան աշխատանքի ապահովման համար	1	6,3				
8	«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի և ԳԳՄ-ների և ՍՊԸ-ների համակարգչա-շառավղային ցանցի ստեղծում		16,7		6,7		4,2
9	ՍԿԱԴԱ համակարգ այդ թվում,		52,3		31,7		13,3
	ՍԿԱԴԱ համակարգի ընդլայնում ներառելով Տրանսգազի ՉՀ	4	26,7	4	26,7	2	13,3
	ՍԿԱԴԱ համակարգի հիման վրա հաշվեկանոն մեթոդների և ապահովման ծրագրի մշակում՝ հաշվեկշիռների կազման և մայրուղային գազատարների առանձին հատվածների կառավարման համար		8,3		0		0
	ԳԲԿ-ներում տեղադրված "Armflo" տիպի ծախսաչափիչ համակարգերից ինֆորմացիայի ավտոմատ ստացմանը և փոխանցմանը ուղղված ՍԿԱԴԱ համակարգի ներդրում		5		5		0
	ՍԿԱԴԱ համակարգի լրայրացում՝ գազաբաշխման համակարգի չափիչ հանգուցներից և խոշոր սպարողներից տեխնոլոգիական տեղեկատվության հավաքագրման համար	1	12,50				
<b>Ընդամենը</b>			<b>155.7</b>		<b>76.7</b>		<b>57.0</b>

Անկալվող արդյունքները

Նշված միջոցառումների իրականացման շնորհիվ հնարավորություն կստեղծվի՝

- Առավել արդյունավետ կազմակերպել տարածքային արտադրա-շահագործման ծառայությունների, ինչպես նաև ԳԳՄ-ի համապատասխան ստորաբաժանումների վթարա-վերականգնողական ծառայությունների աշխատանքները,
- Ապահովել վթարա-վերականգնողական ծառայությունների աշխատակիցների օպերատիվ կապը համապատասխան դիսպետչերական ծառայության հետ՝ հայտնաբերված վթարների վերացման աշխատանքներ իրականացնելիս,
- Վթարա-վերականգնողական ծառայությունների աշխատանքներն իրականացնել ինչպես տարածքային դիսպետչերական ծառայության, այնպես էլ տարածաշրջանում գործող այլ վթարա-վերականգնողական ծառայությունների հետ համաձայնեցված,
- Բարձրացնել գազափոխադրման համակարգի շահագործման անվտանգության աստիճանը,
- Բարելավել հանրապետություն ներկրվող և տեղափոխվող բնական գազի ռեժիմների կարգավորման գործընթացը,
- Օպերատիվ կերպով համակարգել գազափոխադրման համակարգի տարբեր ստորաբաժանումների կողմից կատարվող աշխատանքները:

## **Բ Ա Ժ Ի Ն 4**

**2007-2009 թթ. գումարային ներդրումներ**

**Բաժին 4. 2007-2009 թթ. գումարային ներդրումներ**

Հանրապետությունում բնական գազ սպառողներին հուսալի, անխափան և անվտանգ գազամատակարարման ապահովման ուղղված միջոցառումների իրականացման նպատակով «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն 2007-2009 թթ. նախատեսում է իրականացնել աղյուսակ 27-ում ներկայացված ներդրումները, որոնցում **ներառված չէ ավելացված արժեքի հարկը:**

*Ներդրումային ծրագրում ներկայացված շինարարական, փոխարինման, վերագինման կամ վերականգնման միջոցառումները կատարվելու են նոր նախագծերի, կատարողական ակտերի կամ թերությունների ակտերի հիման վրա, ինչպես նաև ԳՍՊԿ-ի համալիր վերակառուցման բիզնես-ծրագրի հիման վրա:*

***Ներդրումային ծրագրի ֆինանսավորման աղբյուրները***

Վերոհիշյալ միջոցառումների իրականացման համար որպես ֆինանսավորման աղբյուրներ կհանդիսանան «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ սեփական և փոխառու միջոցները:

Աղյուսակ 27. 2007-2009 թթ. գումարային ներդրումներ

h/h	Հիմնական ուղղվածություն	Միջոցառումների անվանումը	տարի (մլն դրամ)		
			2007	2008	2009
	<b>Գազափոխադրման համակարգ</b>		<b>35447,9</b>	<b>18515,0</b>	<b>4792,5</b>
1	<b>Մայրուղային գազատարներ</b>	Գազատարերի շինարարություն, վերատեղադրում, փոխարինում	555,7	157,9	56,7
2		ԳԲԿ շինարարություն և վերազինում	96,6	70,8	70,8
3		Գծային փականներ տեղադրում, վերազինում	25,0	25,0	25,0
4		ԷՊԿ տեղադրում, վերազինում	159,0	159,0	38,0
5		Էլ.համակարգի վերականգնում	39,0	13,0	13,0
6		Հաշվառման համակարգի արդիականացում	25,4	26,7	24,2
7		Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրում	138,5	12,5	12,5
8		Համակարգի ընդլայնում	32981,8	17323,2	1695,1
9	<b>ԳՍՊԿ</b>	Վերակառուցում և արդիականացում	1427,0	727,0	2857,3
	<b>Գազաբաշխման համակարգ</b>		<b>3281,7</b>	<b>1860,8</b>	<b>1799,1</b>
10	<b>Բաշխման գազատարներ</b>	Շինարարություն	416,7	0,0	0,0
11		Գազահաշվիչներ	1400,0	840,0	560,0
12		Վերականգնում	935,1	676,7	798,3
13		Հաշվառման համակարգի արդիականացում	172,5	118,4	105,9
14		Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրում	169,4	57,6	54,1
15		ԷՊԿ տեղադրում	129,9	130,2	240,2
16		Էլ.համակարգի արդիականացում	58,1	37,9	40,6
	<b>Սպասարկող ծառայությունների ոլորտներ</b>		<b>1611,2</b>	<b>569,7</b>	<b>459,1</b>
17	<b>Շենքեր, շինություններ</b>	Բարեկարգում, ընդլայնում	970,0	254,6	172,1
18	<b>Ավտոտրանսպորտ</b>	Չեռք բերում	467,8	216,4	218,0
19	<b>Աշխ.պաշտպանութ</b>	Համալրում	17,7	22,0	12,0
20	<b>Կապ</b>	Ռադիոկապի ներդրում	155,7	76,7	57,0
	<b>Ընդամենը</b>		<b>40340,8</b>	<b>20945,5</b>	<b>7050,7</b>

Տեխնիկական վարչության պետ	Հ.Թադևոսյան
ԳՓ Շ և Ս վարչության պետ	Ս.Մարգարյան
ԳԲՑՇ և Ս վարչության պետ	Յու.Նազարյան
ՏՏ և ԳՀ վարչության պետ	Ա.Գրիգորյան
ԶՆԾ վարչության պետ	Ա.Հակոբյան
ՇԿ վարչության պետի տեղակալ	Հ.Իսախիրյան
ՇԿ վարչության Գլխավոր մեխանիկ	Ն.Ավանեսով
Ֆինանսական բաժնի պետ	Ա.Համբարյան

**«ՏՐԱՆՍԳԱԶ» ՍՊԸ**

Տնօրենի տեղակալ	Ս.Թամանյան
Արտադրա-շահագործման վարչության պետ	Դ.Հակոբյան
Տեխնիկական քաղաքականության վարչության պետ	Շ.Ստեփանյան